ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հոկտեմբերի 11-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիանա Հայկազի Գրիգորյանի** և նույն ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Գևորգի Ճուղուրյանի «Կառավարչական հաշվառում»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. կառավարչական հաշվառումը արդյունավետ տեղեկատվական գործիք է կառավարիչների կողմից որոշումներ կայացնելիս: Ներկայացված ուսումնական ձեռնարկի հիմնական նպատակը որոշումների կայացմանն առնչվող տեղեկատվական համակարգի ձևավորման լուսաբանումն է: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է ոչ միայն ֆինանսական, այլ նաև ոչ ֆինանսական տեղեկատվությանը: Ձեռնարկում տրվում են մեկնաբանություններ, թե ինչպես կարելի է կառավարչական հաշվառման միջոցով ձևավորել ոչ ֆինանսական տեղեկատվությամբ ներքին հաշվետվական համակարգ և այն կիրառել ինչպես մարտավարական, այնպես էլ ռազմավարական որոշումներում: Ձեռնարկը հագեցած է գործնական խնդիրների առաջադրումներով և լուծումներով, որոնք հնարավորություն են տալիս դասավանդման ժամանակ զարգացնել ուսանողի հմտություններն ու կարողությունները կառավարչական հաշվառում կազմակերպելիս: Ներկայացված են նաև իրավիճակային խնդիրներ, որով կառավարչական որոշումների կայացման ունակություններ են ձևավորում ուսանողների մոտ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 2 դրական կարծիք.

1) Կառլեն Խաչատրյան՝ Երևանի պետական համալսարանի կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

1) Նարինե Կիրակոսյան՝ Եվրոպական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ուսումնական ձեռնարկի կիրառումը տնտեսագիտության մասնագիտություններով կրթական ծրագրերում զգալիորեն կբարձրացնի դասավանդման գործընթացի արդյունավետությունը և ուսանողներին կհաղորդի կառավարչական տեղեկատվության հմտություններ: Ձեռնարկում ներկայացված նյութը խիստ արդիական է և այն կարող է օգտակար լինել ինչպես տնտեսագետ ուսանողների, այնպես էլ գործող կառավարիչների, կառավարչական հաշվառմամբ հետաքրքրվող դասախոսների և հետազոտողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիանա Հայկազի Գրիգորյանի** և նույն ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Գևորգի Ճուղուրյանի «Կառավարչական հաշվառում»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ 150 օրինակ տպաքանակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 56, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. հոկտեմբերի 11
Երևան